

ՊԵԹԹԻ ՔԻԼԵՐՃԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան

լեզուի ինստիտուտ

bettykilerjian@gmail.com

ՀԱՌԻՐՏ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Քանալի քառեր՝ Հաուըրտ Գարակեօզեան, Միհրան Գարակեօզեան, «Անանուն Բարերար», Հալէպ, Սուրիա:

Հաուըրտ Գարակեօզեան հաստատութիւնը (անգլերէն՝ Howard Karagheusian Commemorative Corporation, կը կոչուի նաեւ «Հաուըրտ Գարակեօզեան յիշատակի ընկերակցութիւն») բարեսիրական կազմակերպութիւն է:

Հաուըրտ Գարակեօզեան հաստատութիւնը 1921-ին Նիւ Եորքի մէջ հիմնած են Միհրան եւ Զապէլ Գարակեօզեանները՝ ի յիշատակ իրենց վաղամեռիկ որդիի՝ Հաուըրտի, եւ կոչած անոր անունով: Սկզբնապէս հաստատութեան նպատակը եղած է տարբեր երկիրներու մէջ ապրող հայ որբ, կարիքաւոր մանուկներու խնամքի, բուժման եւ կրթութեան կազմակերպումը¹:

Գարակեօզեան հաստատութիւնը իր հիմնադրութեան օրէն Նիւ Եորքի մէջ կը ստեղծէ կեդրոնական վարչութիւն մը՝ նախագահութեամբ Միհրան Գարակեօզեանի: Վարչութեան մաս կը կազմէին հայ եւ օտար հանրայայտ դէմքեր ու անձնաւորութիւններ: 1930-ին բարեգործութեան ջախը կը փոխանցուի բարերարի դասեր՝ օրիորդ Լէյլա Գարակեօզեանին, որ կը շարունակէ Կեդրոնական Վարչութեան նախագահութիւնը մինչեւ իր մահը՝ 1999 թ.:

¹ The Howard Karagheusian Commemorative Corporation. 75 years of service, New York, 1996, p. 18.

Միհրան Գարակեօզեանը 1922-ին Կ. Պոլսոյ մէջ կը հիմնէ «Հաուըրտ Գարակեօզեանի տունը», որ հետագային կը տեղափոխուի Ֆրանսա²: Հիմնարկը իր գործունէութիւնը կը շարունակէ Փարիզի մօտ դղեակի մը մէջ, ուր Գարակեօզեան ամուլը մեծ հոգատարութեամբ կը խնամէ հայ որբերը մինչեւ 1936թ.: Այնուհետեւ կ'անցնի Աթէնք: Հայաստանի անկախացումէն ետք եւ մինչեւ օրս ընկերակցութիւնը իր գործունէութիւնը կը ծաւալէ նաեւ Հայաստանի մէջ:

Հ. Գարակեօզեան հաստատութիւնը ունի գրասենեակներ, որոնք կը գործեն ԱՄՆ-ի, Սուրիոյ, Լիբանանի եւ Հայաստանի մէջ³:

Հ. Գարակեօզեան հաստատութեան տեսլականն է՝ երեխաներին եւ անոնց ընտանիքներուն հզօրացնել՝ առողջ եւ արդիւնաւէտ կեանք վարելու, տնտեսական ինքնաբաւութեան հասնելու եւ իրենց համայնքներուն մէջ բարգաւաճելու համար⁴:

Հաստատութիւնը իր առաքելութեան հասնելու համար իր ծառայութիւնները կը հիմնէ առողջութեան առաջնային պահպանման երեք հիմնասիւներու վրայ, որոնք են.

- Կանխարգելման եւ կրթական արշաւներ
- Բուժում
- Հետապնդում⁵

Հաուըրտ Գարակեօզեան հաստատութիւնը կ'աջակցի Մերձաւոր Արեւելքի, Հայաստանի եւ Ղարաբաղի սոցիալապէս եւ տնտեսապէս խոցելի հայ համայնքներուն՝ նպատակ ունենալով թերթեցնել անոնց տառապանքը:

Հաստատութեան առաջնահերթութեան ոլորտներն են.

- ✓ Երեխաներու առողջապահութիւն,

² <https://akunq.net/am/?p=143>:

³ Հայկական Միջուռք Տարեգիրք, Հայաստանի Հանրապետության Միջուռքի Նախարարություն, Երևան, 2013, էջ 144:

⁴ <https://www.thkcc.org/thkccwp/about/#mission>:

⁵ <http://www.hkcc.org.lb/mission.aspx>:

✓ Անվասայլականերու, լսողական սարքերու եւ դեղերու բաշխում,

✓ Յետդպրոցական ծրագիրներ, ուսուցում վտանգի տակ գտնուող երիտասարդներու համար եւ մանկական ամառնային ճամբարներ,

✓ Համայնքային առողջապահական ծառայութիւններ,

✓ Մասնագիտական ուսուցման, արուեստներու եւ արհեստներու ծրագիրներ,

✓ Բնակարանային օգնութիւն,

✓ Սոցիալական աջակցութիւն, ներառեալ խորհրդատուութիւն,

✓ Նիւթական աջակցութիւն դպրոցներուն, մանկատներուն, երիտասարդական ճամբարներուն, ծերանոցներուն, բուժարաններուն եւ հիւանդանոցներուն⁶:

Գարակէօզեանի գործունէութեան առաջին շրջանը կը սկսի Պոլսոյ մէջ 1921-ին, ուր կը հիմնեն Հաուլըրտ Գարակէօզեան որբանոց-տունը, որ դարձաւ ապաստան շուրջ 70 դեռատի հայորդիներու:

1937-ին, երբ հայ փախստականները կը պայքարէին վերականգնելու իրենց կեանքը Լեւանտի մէջ, Գարակէօզեան հաստատութիւնը կը սկսի գործել Յունաստանի մէջ՝ ապահովելով ամենօրեայ սնունդ, պատուաստումներ եւ բազմաթիւ սոցիալական եւ առողջապահական ծառայութիւններ: Երբ կը սկսի Երկրորդ համաշխարհային պատերազմը, Յունաստանի մէջ հաստատութիւնը շտապ մարդասիրական օգնութիւն կը տրամադրէ, ինչպէս նաեւ միջոցներ՝ վերահսկելու համաճարակները: Յունահայ համայնքի յետպատերազմեան օգնութիւնը կը շարունակուի բնակարանային ծրագիրով եւ մանկական ամառնային ճամբարով: Աթէնքի Ֆիքս-

⁶ <http://thkcc.org/mission.html>:

թուրդութ արուարձանին մէջ Գարակէօզեանը յատուկ հոգատարութիւն կը ցուցաբերէ հայ մանուկներուն եւ ընտանիքներուն: Տուրդութի մէջ Գարակէօզեան հիմնարկը հայ ընտանիքներ պատսպարելու համար կը կառուցէ 50 յարմարաւէտ բնակարաններ: Յետագայ տարիներուն Յունաստանի մէջ հաստատութեան գործունէութիւնը ժամանակի պահանջներուն համաձայն որոշ փոփոխութիւններ կրելով կը շարունակուի մինչեւ 1995:

Հոկտեմբեր 1992-ին կը հիմնադրուի եւ պաշտօնական գրանցում կը ստանայ Հայաստանի «Հաուըրտ Գարակէօզեան» բարեգործական հասարակական կազմակերպութիւնը: Կազմակերպութեան ծրագիրով կը նախատեսուէր Երեւանի եւ Հայաստանի տարբեր մարզերուն մէջ հիմնել միջազգային չափանիշներուն համապատասխանող ժամանակակից սարքաւորումներով յագեցած եւ բարձրորակ մասնագէտներով համալրուած մանկական ատամնաբուժարաններ՝ հայաստանաբնակ երեխաներուն անվճար եւ որակեալ բուժական օգնութիւն ցուցաբերելու նպատակով⁷:

Գարակէօզեան հիմնարկի գործունէութիւնը Յունաստանի եւ Միջին Արեւելքի զանազան մարզերէն ներս գործադրուեցաւ տնօրէնութեամբ Գարակէօզեան ընտանիքի մերձաւոր հարազատներէն տէր եւ տիկին Նուպար եւ Անահիտ Դաւիթեաններու ջանքերով: Իր պաշտօնավարութեան ընթացքին Նուպար Դաւիթեան գնահատելի նախաձեռնութիւնը ունեցաւ գրի առնելու Գարակէօզեանի գործունէութեան առաջին յիսուն տարիներու համապարփակ պատմութիւնը, երկու անտիպ հատորներու մէջ: *The Story of The Howard Karagheusian Philanthropic Venture, 1921 – 1971 the first 50 years* by Noubar K. Tavitian, (Director 1922 – 1974). “If the grain dies, it bringeth forth much fruit.” (St. John 12.24): Երկարաշունչ այս ժողո-

⁷ Հովարդ Կարազոզեան հիշատակի ընկերակցութիւնը Հայաստանում (10 տարի), Եր., 2002, էջ 17–18:

վածուները, պարզ ու բովանդակալից ոճով կը ներկայացնեն Գարակեօզեան ընտանիքի պատմութիւնը, հաստատութեան գործունէութիւնը՝ Պոլիսէն Ֆրանսա, Աթէնք, մինչեւ Սուրիա, Լիբանան, ուր վաւերական փաստերով ու թուականներով ներկայացուած են հայ կեանքի մասին մանրամասն տեղեկութիւններ:

1939-ին, երբ Ալեքսանտրէթի Սանճաքը կը կցուի Թուրքիոյ, հայ գաղթականներու նոր հոսք մը կը հասնի Սուրիոյ եւ Լիբանան: Այդ օրերուն Գարակեօզեան հաստատութիւնը իր ծառայութեան դաշտը կ'ընդլայնէ օգնութեան հասնելու հայ գաղթականներուն:

Տասնամեակներ շարունակ ծառայելէ ետք Թուրքիոյ, Ֆրանսայի եւ Յունաստանի մէջ, Գարակեօզեան հաստատութիւնը իր բարեգործական բժշկական եւ ընկերային ծառայութիւնները ընդլայնեց դէպի Հայաստան, Լիբանան եւ Սուրիա⁸:

Առաջին հերթին Լիբանանի Այնճար հայաբնակ գիւղին մէջ կը բացուի Գարակեօզեան դարմանատունը: Այնուհետեւ 1941-ին Պէյրութի արուարձաններէն Պուրճ Համուտի մէջ կը սկսի գործել Գարակեօզեանի մանկախնամ կեդրոնը:

Սուրիոյ մէջ Հ. Գարակեօզեան հաստատութիւնը կեանքի կը կոչուի Ալեքսանտրէթի պարպումէն՝ 1939-էն ետք, երբ հայ գաղթականներ կու գային կայք ու ապաստան գտնելու Սուրիա, յատկապէս՝ Հալէպի մէջ:

Հաստատութեան գործունէութիւնը սկզբնական շրջանին, 1940-ին, Հալէպի մէջ կը սահմանուի ճաշի մատակարարումով Սանճաքէն բռնագաղթուած հայ ընտանիքներուն եւ սննդակարօտ դպրոցական աշակերտներուն: Մինչ այդ, ազգային բարերար Միհրան Գարակեօզեանի դասաւորումով եւ Հաւուրտ Գարակեօզեան հաստատութեան նախաձեռնութեամբ, Հալէպի մէջ, 21 Յուլիս 1947 թուականին, հիմնուած է «Անանուն Բարերարի Ձեռնարկ»ը, բարե-

⁸ <http://www.hkcc.org.lb/directors.aspx>:

րարութեամբ՝ ազգային բարերար Վարդան Ճինիշեանի, որուն յանձանձումը ստանձնած է Հաստատութիւնը⁹: Որբերու հայր՝ Վարդան Ճինիշեան մինչեւ մահը կը մնայ որպէս «Անանուն Բարերար», իր նպատակն էր Գարակէօզեան հիմնարկին միջոցով օժանդակել հայ այրիներուն: Հիմնարկի աշխատանքը այս գործը տնօրինելու, առաջադրուած ծրագիրը մշակելու համար կը կազմուի խնամակալութիւն մը, ուր երեք յարանուանութիւնները կ'ունենան իրենց ներկայացուցիչները: Խնամակալութեան մաս կը կազմեն եկեղեցականներ ու ազգային գործիչներ, նախագահութեամբ՝ գերշ. Տ. Զարեհ Եպս. Փայասլեանի, /յետագայի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի/, ներկայութեամբ՝ օրիորդ Լէյլա Գարակէօզեանի, տէր եւ տիկին Նուպար եւ Անահիտ Դաւիթեաններու:

1948-ին կը մահանայ Միհրան Գարակէօզեան, «Անանուն Բարերար»-ի ցանկութեամբ Գարակէօզեանի յիշատակին ամէն տարի յատուկ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Հալէպի /Սուրբ Քառասնից Մանկանց/ Մայր եկեղեցւոյ մէջ:

1949-ին, ընդառաջելով Բերիոյ Թեմի առաջնորդ Զարեհ Եպս. Փայասլեանի առաջարկին, Գարակէօզեանը 1 Մարտ 1949-ին կը ստանձնէ 1944–1948 տարիներուն Հալէպի մէջ գործող Հայկ Թիւֆէնքճեան դարմանատունը, վերանուանելով «Հ. Գարակէօզեան դարմանատուն»¹⁰: Այդ թուականէն կը սկսի իրագործել հաստատութեան առողջապահական գործունէութիւնը, տնօրինութեամբ՝ Գէորգ Ներսոյեանի:

1980-ին Հ. Գարակէօզեան հաստատութեան տնօրէնութիւնը կը ստանձնէ դարմանատան բժիշկ Պետրոս Տարագճեանը: 1982-ին, դարմանատունն ու Հաստատութեան կեդրոնատեղին Րամա-

⁹ **Գաթրճեան Ա.**, Հայերը Հալէպի Պատմութեան մէջ (Է. մաս), <https://hairenikweekly.com/2017/12/08/33903>:

¹⁰ **Գաթրճեան Ա.**, Հայերը Հալէպի Պատմութեան մէջ (Է. մաս), նոյնը:

տանիյէի շրջանէն փոխադրուած են Սիւլէյմանիէ թաղամասի Հայ Աւետարանական Քրիստոսի եկեղեցւոյ շրջափակէն ներս (նախկին Միս Պիւլի Դարմանատան շէնքը), ուր կը գործէ մինչեւ այսօր¹¹: Քանի մը տարի ետք Գարակէօզեանը Գամիշլիի հայ առաքելական եկեղեցւոյ շրջափակին մէջ կ'ունենայ մանկաբուժական եւ ատամնաբուժական դարմանատուն: Հաստատութիւնը լայն գործունէութիւն կը ծաւալէ Սուրիոյ տարածքին, իր աշխատանքին դաշտը տարածելով Հալէպէն Գամիշլի, Տէրիք, Ռաքքա, Թէլ Ապիատ, Հասիչէ մինչեւ Լաթաքիա եւ Քեսապ: Գարակէօզեանը իր գործունէութեան ծիրէն ներս կը հետապնդէ եւ կը գործադրէ գաղութներու պահանջներուն համաձայն ծրագիրներ, ինչպէս՝ մանկաբուժական, ատամնաբուժական, դպրոցական առողջապահական, «Անանուն Բարերար»ի օժանդակութիւններ, վերաբնակեցման եւ ընկերային ծառայութեան զանազան գործունէութիւններ:

Ներկայիս Սուրիոյ մէջ հաստատութիւնը կը գործէ իբրեւ մանկական եւ ատամնաբուժական դարմանատուն Հալէպի եւ Գամիշլիի մէջ: Երկու վայրերուն մէջ աշխատանքը բաղկացած է առողջապահական, բժշկական եւ ընկերային ծառայութիւններէ, որոնք հիմնադրամին կողմէ կը տրամադրուին դպրոցական եւ անապահով երեխաներուն եւ մեծահասակներուն: Հաստատութենէն ներս կ'աշխատին բժիշկներ, ատամնաբոյժեր, բուժքոյրեր եւ սոցիալական աշխատողներ¹²:

Առողջապահական մարզը եղած է եւ կը շարունակէ մնալ հաստատութեան ծրագրային կարեւոր բնագաւառ մը: Գարակէօզեան հաստատութիւնը իրերայաջորդ տասնամեակներու ընթացքին միշտ հաւատարիմ մնալով իր մարդասիրական առաքելութեան

¹¹ Նոյնը

¹² <https://www.causeiq.com/organizations/howard-karagheusian-commemorative-corporation,136149578/>:

գործադրած է իւրայատուկ ծրագիրներ հայ մանուկներու եւ չքաւոր ընտանիքներու կարիքներուն համապատասխան:

Հաստատութեան հիմնական նպատակը եղած է հայ մանուկներուն հոգածութիւնը նորածինէն մինչեւ 14 տարեկան հասակը:

Հաստատութեան բժշկական բաժանմունքը ունի հետեւեալ ծառայութիւնները.

- Ատամնաբուժարան
- Մանկաբուժական դարմանատուն
- Դպրոցական առողջապահական ծառայութիւններ

Երեխաներուն համար սահմանուած է ամէն տեսակի խնամք: Կարիքաւոր երեխաները կը ստանան կաթ եւ այլ կարգի սննդամթերք: Յայտնաբերուած հիւանդութիւնները կը բուժուին քաղաքին տարբեր մասնագէտներուն կողմէ: Երեխաներու սրտի արատներու վիրահատութիւնները կը կատարուին Հայաստանի մէջ Գարակէօզեանի նիւթական օժանդակութեամբ: Նկատի առնելով այն հանգամանքը, որ երեխաները չեն ապրիր մեկուսացուած, կարելի չէ անոնց օգնութեան ձեռք երկարել՝ առանց հաշուի առնելու ընտանիքը, դպրոցը, փողոցը, շրջակայ միջավայրը եւ բոլոր գործօնները, որոնց անոնք կ'ենթարկուին: Այս նպատակով, Հ. Գարակէօզեան հաստատութիւնը կը ձգտի ապահովել երեխաներու լիարժէք զարգացումը իրենց ընտանիքներուն եւ անմիջական միջավայրին մէջ:

Հաստատութեան ատամնաբուժական դարմանատունը Սուրիոյ տարածքին գործող միակ մասնագիտացած մանկական ատամնաբուժական կեդրոնն է, որ իր երկար տարիներու փորձառութեամբ եւ բարձր որակի մասնագիտացած բուժումով կը ծառայէ հայկական վարժարաններու աշակերտութեան¹³:

¹³ Հատորոտ Գարակէօզեան Հաստատութիւնը Իր Նուիրական Երթով, «Գանձասար», Դեկտեմբեր Ա. 2015, էջ 5:

Գարակեօզեանը տասնամեակներ շարունակ, որպէս բժշկական բարեսիրական կազմակերպութիւն, հայկական վարժարաններէն ներս կ'իրագործէ դպրոցական առողջապահական ծրագիրներ: Այս մտահոգութեամբ եւ առաջադրանքով դպրոցներէն ներս կը գործադրուի դպրոցական առողջապահական ձեռնարկ՝ նպաստելու մատղաշ սերունդի առողջ դաստիարակութեան:

1980-ական թուականներուն Գարակեօզեան հաստատութիւնը իր կարելորդ նպաստը ունեցած է Հայ Ծերանոցէն ներս: Անկար հիւանդներուն խնամքին կը հետեւէր Գարակեօզեանի կողմէ նշանակուած մնայուն պաշտօնեայ բուժքոյր մը: Սուրիոյ պատերազմի տարիներուն Գարակեօզեանը չզլացաւ օգտակար հանդիսանալու հայ ծերերուն, հոգալով անոնց անմիջական կարիքները, ապահովելով սննդամթերք, հանդերձանք, ակնաբուժական քննութիւններ եւ ճաշի մատակարարում¹⁴:

Հայ դպրոցը հանդիսանալով Գարակեօզեանի հոգատարութեան ամենակարելորդ մարզերէն մէկը հետեւողական աշխատանքով ճիգ չէ խնայած հայկական բոլոր դպրոցներէն ներս բարելաւելու եւ պահպանելու առողջապահական պայմանները, ինչպէս՝ ջուրի մատակարարումը, լուսցարաններու մաքրութիւնը, սենեակներու լուսաւորումը: Կարգ մը դպրոցներ կը ստանան յատուկ նիւթական օժանդակութիւններ շէնքի նորոգութիւններու համար:

Հաստատութեան ընկերային ծառայութեան կեդրոնը 1982-էն ի վեր կը ծրագրէ ու կը կազմակերպէ դասընթացքներ՝ առաջին բուժօգնութիւն, ձեւագիտութիւն, արտնին տնտեսագիտութիւն, հայկական խմորեղէններ, հայկական ձեռագործեր, նկարչութիւն, տարբեր լեզուներու դասաւանդութիւն՝ հայերէն, արաբերէն, անգլերէն,

¹⁴ Նոյնը

ֆրանսերէն, համակարգչային դասընթացքներ, հերթական դասա-
խօսութիւններ¹⁵:

Հաստատութիւնը Հալէպի մէջ 1984-ին ծրագրած է Հալէպի ե-
րեք հիւղաւաններու մէջ բնակող հայութիւնը փոխադրել Նոր Գիւղի
հայկական վարժարաններու եւ եկեղեցիներու շրջակայքը ու գնած
80 բնակարան¹⁶:

Սուրիոյ պատերազմի տարիներուն Գարակէօզեանը օգնու-
թեան ձեռք մեկնեց տնտեսական վերիվայրումներու, գործազրկու-
թեան պատճառով սնանկացած, անել կացութեան մատնուած,
դժբախտացած հազարաւոր հայ ընտանիքներուն:

Անցնող տասնամեակներու ընթացքին Հ. Գարակէօզեանը ըն-
կերային ծառայութեան ծիրէն ներս գործադրած է զանազան դաս-
տիարակչական ծրագիրներ, ինչպէս՝ խուլ-համրերու ձեռնարկ,
դպրոցազուրկ հայ պարմանուիիներուն գործնական եւ արհեստա-
վարժական դասընթացքներ:

Գարակէօզեանը իր օժանդակութիւնները չէ խնայած քոյր հաս-
տատութիւններու եւ Հայաստանի երկրաշարժէն տուժած մանուկնե-
րուն, ինչպէս՝ Ազգային Պատսպարանի եւ Արեւիկ թերաճներու կեդ-
րոնին:

Հ. Գարակէօզեան հաստատութիւնը Սուրիոյ մէջ կը վայելէ հա-
լէպահայ երեք համայնքապետերու հովանաւորութիւնը եւ բարոյա-
կան աջակցութիւնը: Գարակէօզեանի կատարած աշխատանքը հա-
յաշատ գաղութներէն ներս ամենաւեական ցուցանիշն է հաստատու-
թեան մարդասիրական ազգօգուտ գործունէութեան: Գարակէօ-
զեանը որպէս բարեսիրական ինքնատիպ կառոյց կը հանդիսանայ
գաղութահայութեան կեանքի բարելաւման նպաստող կարեւոր
խթանիչ գործօն:

¹⁵ Նոյնը

¹⁶ Նոյնը:

Այսօր Գարակէօզեան հաստատութիւնը կը շարունակէ 2020-փետլ Սփիւռքի, Հայաստանի եւ Արցախի մէջ գտնուող հայերու կեանքը՝ ապահովելով կենսական առողջապահական, կրթական, սոցիալական աջակցութիւն, մասնագիտական եւ բնակարանային ծրագիրներ՝ աջակցելով դպրոցներուն, մանկատուններուն, հիւանդանոցներուն եւ համայնքային այլ հաստատութիւններուն:

Գարակէօզեանը Սուրիոյ տարածքին մեծ թափով ծաւալեց խնամատարական իր աշխատանքը՝ հասնելով մինչեւ սահմանամերձ շրջանները, օգնութեան ձեռք մեկնելով բազմահազար հայ ընտանիքներուն, հայ մանուկներուն ու ծերերուն, զօրավիգ կանգնելով հայ դպրոցին ու հայկական մշակութային կեդրոններուն, որպէսզի անոնք չյանձնուին պատերազմի կործանիչ տարերքին: Որպէսզի հայութիւնը կարենայ պահպանել իր գոյերթը առանց կորսնցնելու արժանապատիւ կեանքի ուժն ու կորովը:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАНИЗАЦИИ ГОВАРДА ГАРАКЕОЗЯНА В СИРИИ

КИЛЕРЧЯН Б.

Резюме

Ключевые слова: Говард Гаракеозян, Мигран Гаракеозян, анонимный благотворитель, Алеппо, Сирия.

Ассоциация Говарда Карагевсяна в Сирии возникла после эвакуации Александра в 1939 году, когда армянские иммигранты прибыли в Сирию и начали искать там убежище, особенно в Алеппо.

Учреждение активно работает по всей Сирии: от Алеппо до Гамишли, Дерика, Ракки, Тель-Апиата, Хасиче до Латакии и Кессаба, где оно является образцом для благотворительных организаций.

THE ACTIVITIES OF HOWARD GARAKEOZYAN'S ORGANIZATION IN SYRIA

KILERJIAN B.

Summary

Keywords: Howard Garakeozian, Mihran Garakeozian, anonymous benefactor, Aleppo, Syria.

The Howard Karagheusian Association in Syria was established after the evacuation of Alexandret in 1939, when Armenian immigrants came to Syria and sought refuge there, particularly in Aleppo.

The institution operates extensively throughout Syria, extending its reach from Aleppo to Gamishli, Derik, Raqqa, Tel Abiad, Hasiche to Latakia and Kessab, where it serves as a model for charitable organizations.